56. ԳՏԱՏՈՒՐԻԿ ՓԱՐԵՆ

Մեկ խուֆարե մի ճամբու հետ կէրտար ուրին, քաղաք մի դատելու և կէրթա, մեծ դուրան մի ըռասթ գիկա, կիշկա օրտա բեռ մի ջհոռ օսկի էդ տեղ դրուկ ա։ Կօլրվի ետ ու հ'առեշ, կուշտ ու բոլոր կիշկա, կտեսնի օր մարդ չկա. «Յա՛ ռապի,— կըսա.— ես ի՞մալ էնիմ. թե իտա փարեք վերում տանիմ քաղքի մեջ, պտի ըսին՝ «Խուֆարա, դու հո՛ւր, իտա խըտըր փարեն հ'ուր. յա գողցեր իս, յա գտեր իս». պտի տփին դլխուս, առնինն»։

Հըդ էդ ըսելուն, ձիավոր մի էն դիուց կերևա, գիկա կմոտենա օր՝ մեկ քաստաքուստով աղե մի, ձին կքշա, գիկա վըր Խուֆարա մարդու գլխուն, կհարցու.

— Խուֆարա, դու հ'որի՞ իս կայնե վըր ըտա ճամբուն։

— Աղա,— կըսա Խուֆարեն,— քեղնե պայիմ, ասո՞ւց ինչ պայիմ, իտա ջըհոռ օսկին գտեր իմ, չըմ իշխնա հետս ի տանիմ քաղաք, կբռնին, առնին ընծնե, էն աղեկ օր քըզի պես աղե մը ըռասթ էկավ, արի հ'իրար հետ կիսինք։

— Վերու էրտանք,— կըսա աղեն,— ըսկի մի վախենա, աշխարհ լէ դինան օր ես աղա իմ ու փարի տեր մարդ, քու մազին չմոտենա։

Գելնին Խուֆարեն ու աղեն դեմ կէրտան քաղաք, գիշնին մեկ խայֆախանե մի։ Աֆանտըմ, աղեն ա, ջըհոռ օսկին կառնի Խուֆարի ձեռնեն, կտանա, դնա վերին դեն, ուր ձին կկապա, հ'ետև գիկա նստի, նարկիլեն կգնա հ'առեշ, խայվեն կառնի ձեռն ու, հինք ուրին կփշրաի ու կխմա։ Խղճուկ Խուֆարեն լէ կմնա խայվախանի ճար կանուկ։

Դոր մի կմնա, աղեն կհանա սիվտակ մաճիթե մի, կիտա Խուֆարին, կըսա.

— Ա՛ռ քու քրեն, թող գնա՛։

Խուֆարի սիրտ գելնի, կկանի ու գիլա։

Աղեն կհեռստի վրեն, կսորվցու խայվաչուն. խայֆաչին դիկա, ծեծա Խուֆարին, կենա դուս։

Խուֆարեն ա, դեմ կէրտա կնստի ժամու դուռ, փարա տվող լէ կիտա, դիլա, ու չտվող լէ։ Էն դիուց խելացի կնիկ մի կտեսնի Խուֆարին, կըսա.

«Ջանըմ, ես մաթ կմնամ վըր իտա Խուֆարին, էտոր տան՝ գիլա, չիտան՝ գիլա, հալբաթ մեկ դարտմ ունի, կանի, մոտենամ, տեսնիմ էդ ի՞նչ մարդ ա»։ Կնիկ գիկա, մոտենա, կհարցու.

— Խուֆարա, դու հ՞որի՞ գիլաս, քու դարտն ի՞նչ ա։

— Յաման, խանրմ,— կըսա Խուֆարեն — ընծնե վաղ կեցի, իմ դարտ շատ ա։

— Հալբաթ, ի՞նչ ա քու դարտ, ըսա, բալքի դեղ մ՚լէ ես գինամ։

Խուֆարեն ա, ուր գլխու գալիք խըսա կէնա խանրմին։ Խանրմ կըսա.

— Խուֆարա, ըսկի դարտ մ՚էնի, աստրծով ես քու փարեն կհանիմ, դ՚ելի, էրտանք մեր տուն։

Խանրմ կառնի Խուֆարեն, կտանա ուրանց տուն, կթորկա հ՚ինք շուտ մե շուտ ուր հալավ կհանա, կհագնի մարդանակ շոր, սրհատ կէցկա վիղնու վի, յասամա խայլոն չըպուխ կառնի ձեռ, քեաշելին դեմ կէրտա էն խայվախանի դուռ կկանի, կկանչա խայվաչուն, կհանա դուս, կըսա.

— Էն ի՞նչ ծանտր թուճար ա, հ՚ըսոր հ՚իշե քու խայվախանեն, գնա՛ ընտոր պապու անուն հարցու, արի ընծի ըսա։

Խայվաչին կէրտա ու կըրնկին կդառնա գիկա, կըսա խանրմին.

— Հարցուցի, ուր պապու անուն Ուլի Բաղրկան ա, ինք լէ շա՛տ զանդին ու ասսու կրակի տերն ա։

Խանրմ դեմ կէնա կմտնի ներս, կէրտա էտ աղի մոտ, կնստի, փշում կմնա, կհարցու.

— Աղա, դու հ՚որի՞ իս էկե իշե իտա խայվախանեն, դու իտրմլա շոշ աղե մի, ափսոս չէ՞ քղի, չէղնի՞ մըշ քաղքին ըսկի ճանչվոր չունիս։

— Չէ, վոլլա, ես մարդ չճանչնամ։

Խանըմ էլման կհարցու.— Դու ի՞նչ տեղեն իս։

Կըսա.— Գյապոլա։

— Գյապոլա, մեկ մի ըսիմ կճանչնա՞ս։

— Ո՞րն ա, ըսա տեսնանք։

— Ուլի Բազրկան ա, կճանչնա՞ս։

— Դու ի՛մալ կճանչնաս Ուլի Բազրկնին։

— Ես կճանչնամ, հանտա ընդոր իրեք աղջիկ լէ մըշ մեր քաղքին ա։

— Տո, օղորթմա՞ կըսիս, աստուած քու տուն ակոլա, ելէ Ուլի Բազրկնի տղեն իմ։

— Դու օր ընդոր տղեն իս, ըպա ի՞մալ չըս էկերի հ՛իշե քու քուրվըտոց մոտ։

— Ես ի՞նչ խապար ունենք, թե ընծի իտա տեղ քուր կար, իմ հ՛առջի մամ մեռեր ա, իտա խորթ մամ լէ ըսկի օր մի չըսերա թե՝ «Քզի քուր կա». աստուած քու բան հաջողա, օր խապար տվիր։

— Դը դու կեցի,— ըսեց,— ես էրտամ, քու քուրվըտոց ըսիմ դա։

Խանըմն էր գնաց, ուր մարգանակ հալավ վրռազով հանեց, էլման հագավ ուր կնկնակ շորեր, էրկու ուրիշ լէ դըրկեցի կնիկ գտավ, թամպի էրեց, ըսեց.

— Տես կնկնտիք, գելնինք կէ ,թանք ֆլան խայվախանեն, մեկ զանգի մարթ մը կա. էտի մեկ խուֆարի մի գտածուրիկ փարեն ինքար էրե, չիտա, կէրտանք էտ զանգնի մոտ, ես վախտով գործ շիներ իմ, կըսինք քու քուրվըտիքն ինք, շալոզուտենով, գուպարոստենով բալքի խելք դլխուց գողնանք, փարեն առնինք մոտեն, հըմա գինա՞ք, ձեր անուններ պտի փոխիք, եբոր կհարցու. մեկդ ըսեք՝ իմ անուն Բան ա (ես), էն մեկել լէ՝ Բանտան բեթար (ինձանից վատ), իմ անուն լէ կգնիմ Ներտա օյնամ (ո՞րտեղ խաղամ)։

Խանըմն ա՝ խոնչով, բոխչով, չարապ քյապապով կառնի էդ էրկու կնիկն ու կէրթա դեմ էլման էդ խայվեն։ Խայվաչին ջուապ կտանա բազրկնի տղին թե.

— Ի՞նչ կէնիս, քու քուրվըտիքն էկան։

Բազրկնի տղեն ա, գելնի հարի դուռ հ՛առեջ ուրանց. քուրվըտիք գիկան կփաթվին վըղով, ո՛ր ճակատ կլիզա, ո՛ր հ՛աչքեր, ո՛ր էրես. խոլասա կնստին, կբաշլային կեր ու խում։

— Ա՜խ, քոռներ իդա մեր հ՛աչքեր,— կըսին քուրվըտիք,— դու ի՞մալ թողեցիր մըզի, էկար հ՛իշար իտա խայվախանեն։

— Ես ի՞նչ գինենք, թե ընձի քուր կար,— կըսա բազրկնի

28—1986

տղեն,— հան որ սալըղ առա, մեկ մարդ մի՝ աստված ուր բան հաշողա, էն ըսեց։

— Է՛, օրշնյալ աստված, չէ՞ քզի պես աղբեր գտանք, մենք չմացինք անտեր քուր, էլ բան պետ չէ մըզի։

Դոր մի կմնա, բաղրկնի տղեն կհարցու։

— Է՛, քուրվըտիք, ձեր անուննե՞ր ըպա ի՛նչ ա, չըսեցիք։

Մեկն ըսեց՝ Իմ անուն Բան ա։ — Էն մեկել լէ ըսեց՝ Բանտան բեթար ա։ — Մեկել քուր լէ ըսեց՝ Իմ անուն Ներտա օյնամ ա։

Կուտին, կխմին, մեկ խելի վախթ կմնա, բաղրկնի տղեն բանից գելնի, անտեր էրազն ա՝ «Խծու փոր հ՞ըլնան, էծ կկատղի». էրեց օր բաղրկնի տղի գլոխ էլ վրեն չըկայներ, հըտ գահուն ջուր բերնեն կթալա, ոտ մեկ թարաֆ կէրտա, գլոխ լէ՝ մեկ, ու չըրըվ ի գետին։

Քուրվըտիք խորոտ մի դելնին, բուխերկից տաշտ մի մուր կքոմին, կբերին ջուր կըհ՞ըլնան վրեն ու կշաղին, ետև կբերին էդ բաղրկնի տղին կտկլողցուն, կէնին տիթ ըռութ, ու ինչ օր մուր կա, կլաղողին էդոր քիթ ու մռութն ու ջանտակ, կդառնան բեղեր կբըլըցուն, մազեր կգժգժցուն, բրճամ կտուժկըցուն, ու ուրանք գելնին կառնին ջըհոռ փարեն, էտոր ձին ու շորեր, դե դիտի փախի։

Լուսումթի շուտ խայվաչին գիկա, դուռ կբանա, բաղրրկնի տղեն ջլութ գելնի հ՞առեջ, կանի, կըսա.

— Խայվաչի։

Կըսե.— Բուերու (հրամայե)։

— Հա՞նի բան (ո՞ւր է նսը)։

— Ըշթա սան (ահա գուն)։

— Բանտան բեթա՞ր (ինձնից վա՞տը)։

— Գենա՛ սան (դարձյալ դու)։

— Ներտա օյման (ո՞րտեղ խաղամը)։

— Ներտա օյնասան օյնա, խան բեոյուք դըր (Ուր կխաղաս խաղցի, պանդոկը մեծ է)։

Խայվաչին տեսավ, օր հեղսողաց էտի մեկ սատանեմ ա, բոռբըռուն մի դրեց, թափան էկան, աղա՛, թըքուցին էտոր հ՞երես, ո՛ր փետով, ո՛ր թըքով, ո՛ր կոշտով, քարով, քա՛ր հալած էրին, լարին հանին քաղքից դուս, գնաց կորավ։

Օղորմած խանումն էր, առավ փարեն, բերեց տվեց խուֆարին, բազրկնի տղի թաժա շորեր հագուց ընտրան, ձին հեծցուց։

— Դը՛, գնա՛,— ասեց,— աստված քու հետ։

Խուֆարեն էր, օրշնեց խանումին, հեծավ ձին, խուրճին թալեց թարկ, չընկրցուց զանգունե՛րն ու յալլա՛։